

Հայտարարություն

մասնագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտարարում է մրցույթ հրավաբանական վարչության մուտքագրողի թափուր պաշտոնը համալրելու համար (ծածկագիր՝ 42-26.1-Մ6-7) և վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է հարցազրույցի, որը տեղի կունենա **2021 թվականի մարտի 19-ին, ժամը 11⁰⁰-ին** ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում (ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Գ.Քոչար 21ա):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

- 1) անձնագիր (ՀԾ համարանիշ).
- 2) կրթության վերաբերյալ փաստաթուղթ (ատեստատ, դիպլոմ).
- 3) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
- 4) արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Հարցազրույցը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 111 115 (մեկ հարյուր տասնմեկ հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի (ծածկագիր՝ 42-26.1-Մ6-7) էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Աշխատավայրի հասցեն է՝ **Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, թիվ 36 տարածքային ընտրական հանձնաժողով**:

Վարկանիշային ցուցակում գրանցված անձանց հարցազրույցի հրավիրելու համար տեղեկացնելու վերջնաժամկետի օրն է՝ 2021 թվականի մարտի 16-ը:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անձնակազմի կառավարման բաժին՝ 010-54-52-47 հեռախոսահամարով, կամ ուղարկել հաղորդագրություն BalayanG@elections.am էլեկտրոնային փոստի հասցեին:

11 մարտի 2021թ.